



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ԿՐԱՍԻՆԸ

ՍԱԼՈՒՅՅՆԵՐԻ ՄԵԶ

087-1

Մ-72

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԽՍՀՄԻ ԳԱՅՈՒԹՅԱՆ
ՎՐԵՄՆԱՅԻՆ
ԳԱՅՈՒԹՅՈՒՆ
Համական Խորհ
ՀԱՅԱՍՏԱՆ
ԽՍՀՄ Հայաստանի
Համական Խորհ
ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՊՀՄ ԺԱՌԱՎԱՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՄԱՐԿԱԶ.
ՄՊՍԿՎ. 1931

1931

C 32-
CA 29

23 JUN 2009



ԿՐԱՍԻՆԸ

ՍԱՌՈՒՅՑՑՆԵՐԻ ՄԵԶ

ԽԵԶԻ ԺՈՂՈՎՐԴԻ. ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿ.

ՄՈՍԿՎԱ

1931

087.1
Հ-72

ԼՐԱԿԱՆԸ

ՍԱՐՈՒՅՑՑԵՐԻ

ՄԵԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԻНСՏԻՏՈՒՏԻ
ՊՈՏՈԽՈԳԵԴԻՆԻ
Բանակի Խորհրդ
ՀԽՍՀ

ՓՈՔԻԿԱՆԵՐԻ ՀԱՍՏԱՐ ՊԱՏՄԵՑ՝
“ԿՐԱՍԻՆԻ” ԱՐԵՎԱԿԻՆ ՄԱՍՆԱԳՅՈՂ
ԵԱ. ՄԻՆԳԱԼԻՆ

ԽՈՀԱ ԺՈՂՈՎՐԴԻՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻՑ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ՄՈՍԿՎԱ 1931

Թարգմ. Ս. Մ.




60055-66

Главлит № А-89165.

Заказ № 1001.

Тираж 5.000.

Книжная ф-ка Центрального Издательства Народов СССР, Шлюзовая наб., 10



ՀԵՌՈՒ ՀՅՈՒՄԻՄ ՇԱՐՈՒՆԱԿ ԶՄԵՌ Ե:

ՑԵՎ սարերը, և ծովը, և գետինը — ամեն ինչ այնու
զած ե հաստ, կապտավուն սառույցով:
Լավ ե իրեն զգում սպիտակ արջը: Մե՞
վախենում դաժան սառնամանիքներից, — տաք ե նրա
Այդպիսի մուշտակով սարսափելի չե զբոսնել
սառույցներում:




Շատ անգամ են ճանապարհվել մարդիկ դեպի հավիտենական սառցի յերկիրը։ Ցանկացել են նավերով ճեղքել։ անցնել։ Բայց ծովում հանդիպել են նրանք լողացող սառցե սարերի և շեն կարողացել վհչ յետ գնալ, վհչ առաջ։ յերբեմն ել այդ սարերը ջարդել են նավերը՝ ընկույզի կճեպի նման...

Բայց ահա սովորեցին մարդիկ շինել թռչող մեքենաներ—

ԱՅԵՐՈՊԼԱՆՆԵՐ

ՅԵՎ

ԴԻՐԻԺԱԲԼՆԵՐ



Դիրիժաբլը — դա մի մեծ ողանակ է։

Դիրիժաբլով մարդիկ վորոշեցին թռչել դեպի մշտական ձմրան յերկիրը։ Նրանք ցանկացան հասնել ամենահեռավոր կետին, — ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԲԵՎԵՐԻՆ։

Դիրիժաբլի պետը խալացի յեր։ Նևա անունն եր ՆՈԲԻԼԵ։

Սարքի զցեցին ողանակը, նրա վրա ուղիղ շինեցին, վերցրին հետները տաք մուշտակներ, ուտելու պաշար, բարձրացրին դրոշակները, գործի դրին մեքենաները և դիրիժաբլը թռավ։



Այդ ողանակը կոչվում եր „ԻՏԱԼԻԱ“.

ԹՌՉՈՒՄ Ե ԴԻՐԻԺԱԲԼԸ.

Ահա նա անցավ քաղաքների վրայով. չեն յերեսում նրա
տակը կանաչ դաշտերը: Շարունակ թռչում ե նա դեպի հյուսիս:
Ժամե-ժամ ցրտում ե ողը:

Շուտով, շուտով գիրիժարլի միջի մարդիկ կտեսնեն մշտա-
կան սառցի յերկիրը:

Սառցի մի կտոր լողում ե ծովում. լողում ե ու չի հալչում:
Ապա յերեսում են յերկրորդը, յերրորդը: Քանի գնում շատանում
են ծովում սառցի լողացող կտորները, սկսվում են սառցե-
դաշտեր, սարեր, մեկը մյուսից բարձր, մեկը մյու-
սից սարսափելի...



Մարդիկ վաղուց են փաթաթվել տաք մուշտակների մեջ—
միայն քթերն են յերեսում:


Իսկ ՍԱՌՆԱՄԱՆԻՔԸ ՍԱՏՏԿԱՆՈՒՄ ԵՐ: Ողանավը դրսից կածկ-
վում եր սառցի կեղեռվ. սառչում եր:

ԲԱՅՑ ՀԱԿԱՐԾ ՍԿՍԵՑ ՄԹՆԵԼ: ՔԱՄԻ ԲԱՐՁՐԱՑԱՎ—
մի շար ու դաժան քամի:

— ՓՈԹՈՐԻԿ Ե ՍԿՍՎՈՒՄ, —
ասաց նավապետ Նորիլեն:

Ցեղ վերջին անգամ կարողացավ նա ուղիոյով լուր ուղարկել, թե՝
ԳԻՐԻԺԱԲԼՆ ԸՆԿԱՎ ՓՈԹՈՐԻԿԻ ՏԱԿ:

ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ ԴԻՐԻԺԱԲԼԻ ՄԱՍԻՆ ԱՅԼՅԵՎՍ ՎՈԶ
ՄԻ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԶԿԱՐ:



ՈՒՐ Ե ՆԱ ԻՆՉ ՊԱՏԱՀԵՑ ՆՐԱՆ...

ՎՈԶԻՆՉ ՀԱՅՏՆԻ ԶԵ



ԼՈՒՐ Ե ՌԱԴԻՈՆ.

Լրագիրները հաղորդեցին, թե անհետացավ դիրիժաբլը, կորավ նորիւն իր ուղեկիցներով:

Անցավ մի որ, յերկու, յերեք — ՎՈՉ ՄԻ ԼՈՒՐ:

Անցավ յերկու շաբաթ — վոչ վոք չգիտեր, թե ինչ պատահեց դիրիժաբլին:

Պետք ե մարդկանց փրկել, փնտրել-գտնել դիրիժաբլը: Բայց ով սիրտ կանի գնալ դաժան ձմբան, մշտական սառցի յերկիրը: Վո՞ր նավը կկարողանա ճեղքել անցնել յերկաթի պես կարծր սառույցը:

Գ Տ Ն Վ Ե Յ Ա Յ Գ Պ Ի Ս Ի Մ Ի Ն Ա Վ :

ՍԱՐՍԱՓԵԼԻ 2Ե ՆՐԱ ՀԱՄԱՐ ՎՈՉ ՄԻ ՍԱՌՈՒՅՑ:

Այդ նավը — ՍԱՌՅԱՀԱՏՆ ե: Սառցահատները ընթանում են սառցադաշտերով, փշրում են նրանց և սառած ծովերում ճանապարհ են մաքրում ուրիշ նավերի համար:

Աշխարհի ամենամեծ սառցահատը — Խորհրդային ին սառցահատ „ԿՐԱՍԻՆ“-ի ա-

„ԿՐԱՍԻՆ“-ը դուրս յեկավ Լենինգրադից և ընկավ հեռու ճամբա — անհետ կորած դիրիժաբլը փնտրելու: „ԿՐԱՍԻՆ“-ին առաջնորդում եր մի փորձված կապիտան: Ահա նա կանգնած ե այսեղադ: Տասնյակ տարիներ կապիտանը նավով անցել է ծովերով, շրջել ե ամբողջ աշխարհը, բայց այսպիսի ճանապարհ առաջին անգամն եր իր կյանքում:





„ԿՐԱՍԻՆ“-ով ճա-
նապարհ ընկավ նաև ճա-
մար ձակ ոդաչու-

ԶՈՒԽՆՈՎԱԿԻՆ:

Նրա այերոպղլանը
բեռնեցին սառցա-
հատի վրա և ամուր,
շատ ամուր կապեցին,
վոր փոթորկի ժամանակ
չընկնի,

Ով գիտե, թե ինչեր
կարող են պատահել սա-
ռույցների յերկրում:

Իսկ յեթե ճանկարձ „ԿՐԱՍԻՆ“-ն ել չկարողանա անցնել
այն սառույցներով, այն ժամանակ
ԶՈՒԽՆՈՎԱԿԻՆ կթռչի իր այերո-
պղանով և կոգնի „ԿՐԱՍԻՆ“-ին
գտնելով կորած դիրքաժամկետը






Ավելի հեռու յե գնում „ԿՐԱՍԻՆ“-ը, Ծովերով և ովկիա-
նոսներով գնում ե նա դեպի հեռավոր հյուսիս, այնտեղ, ուր
միայն սպիտակ արջերն են ապրում, ուր շարունակ ձմեռ ե,
սառույց ու սառնամանիք:

Ահա արգեն յերեռում են ձյունով ծածկված սարերը։ Ավելի
ու ավելի յե ձյուն յերեռում ափերին։

Ամայի յեն ափերը, մարդ չկա նրանց վրա:
Կամ մի յեղնիկ ե վաղում հանկարծ, կամ թռչնի յերամ ե թըռ-
չում։ Մարդն ինչ գործ ունի այս կողմերում։

Այստեղ վոչինչ չի բանում, բացի մամուռից։





Իսկ ԱՎԵԼԻ ՀԵՌՈՒՆ — ԱՆԳԱՄ ՄԱՄՈՒՐ ԶԻ

ԲՍՆՈՒՄ:

ԾԱՌԱՆՈՒՄ ԵՆ ՎԻԹԻԱՐԻ ՍԱՌՑԱՍԱՐԵՐԸ, ՄԵԿԸ

ՄՅՈՒՄԻՑ ԲԱՐՁՐ:

ԱՅՆՊԵՍ ԽԻՍՏ ԵՆ ՓԱՅԼՈՒՄ-

ՇՈՂՇՈՂՈՒՄ, ՎՈՐ ՆԱՅԵ-

ԼԻՍ ԱԶՔ ԵՆ ԾԱԿՈՒՄ



Վոր կողմդ նայես —

ՍԱՌՈՒՅՅ,

ՍԱՌՈՒՅՅ

և ՍԱՌՈՒՅՅ...

Լողում ե ու չի հալչում:

ԱՅԱ ՆՐԱՆՔ, ՍԱՌՑԱԴԱՇԵՐԸ

Ս Կ Ս Վ Ո Ւ Մ Ե Ն !



Հնկել են ճամբի վրա

սառցադաշտերը —


չեն թողնում „ԿՐԱՍԻՆ“-ին:

„ԿՐԱՍԻՆ“-ը գրոհեց նրանց վրա իր պողպատե կրծքով —
և ձեղիքեց:

ՍԱՌՈՒՅՑՑՆԵՐԸ ԲԱԺԱՆՎԵՑԻՆ ԻՐԱՐԻՑ,

Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Ճ

S Վ Ի Ն:



Վորքան ավելի մոտ Հյուսիսային բևեռին, այնքան հաստ ե
և ամուր սառույցը:

Ավելի ու ավելի ծանր և դառնում „ԿՐԱՍԻՆ“-ի համար
առաջ գնալը:

Նա այլևս չի կարող ջարդել սառույցը, չի կարող ճանապարհ
բաց անել:

Կանգ առաջ „ԿՐԱՍԻՆ“-ը:

Դուք յետ, վոչ առաջ:

Ի ՞ ՞ ՞
Ա ՞ ՞ ՞



Սառույցների ճեղքերից դուրս յեկան ջրշունները։ Դուրս
յեկան և նայում են „ԿՐԱՍԻՆ“-ին։

— Այդ բնչ հրեշ եւ

Այս տեղերում յերբեք այդպիսները չեն
յերեացել։

„ԿՐԱՍԻՆ“-ից և մարդկան տեսան ջրշուններին Սկսեցին
վորսալ նրանց։

Նույն որը „ԿՐԱՍԻՆ“-ում ջրշունների լուսրդ
ելին տապակում։

Վաղուց կրասինցիներն այդպիս հա-
մեղ կերակուր չելին կերել։

!



60055-66

Նոր ելին ճաշել, — մեկ ել տեսնեն՝
թափառում ե սառցի վրա
մի սպիտակ արջ։
Քալիսե, նայում ե սառցահատին, վոչնչից չի վախենում։
Կրասինցիները վերցրին հրացանները, սկսեցին կրակել արջի
վրա։ Արջն ընկավ։
Նավից պարան իջեցրին, ողը գցին արջի թաթը և շոգե-
նավի կրանով վեր բարձրացրին։



ФЕДЕРАЛЬНАЯ
БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
РАНДОМЫХ НАУК
СССР

Քարշ տվին արջին տախտակամած:

Շրջապատեցին,


Նայում են մեռած գաղանին:

„Ո՞հ, Ի՞նչ ԶԱՂՆ Ե!“

ՀԻՄԱ ԿՐԱՍԻՆՑԻՆԵՐԸ ՅԵՐԿԱՐ ԺԱՄԱՆԱԿ ԱՊԱ-
ՀՈՎՎԱԾ ԵՆ ՄՍՈՎ:



Կապիտանը սկսեց խորհրդակցել ԶՈՒԽՆՈՎՍԿՈՒ հետ, թե
ինչպես շարունակեն վորոնումները: Կապիտանն ասաց, վոր
„ԿՐԱՍԻՆ“-ը այլևս գնալ չի կարող:
Դեռք ե ԶՈՒԽՆՈՎՍԿԻՆ թռչի
Իջեցրին այերոպլանը սառցի վրա: ԶՈՒԽ-
ՆՈՎՍԿԻՆ և իր ոգնականները նստեցին իրենց տե-
ղերը, լարեցին մեքենաները, վորոնաց այերոպլանը,
սահեց սառցի վրայով, բարձրացավ ողի մեջ ու
թռավ բարձր, բարձր ու բարձր...
Եւ կրասինցիները նրան չտեսան!



ԶՈՒԽՆՈՎԱԿԻՆ թոչում եր ընդարձակ սառցե տարածությունների վրայով և անընդհատ ցած եր նայում. մարդ չի յերեսում արդյոք:

Ցեզ հանկարծ տեսնում ե. յերկու մարդ սառույցի վրա. Մեկը պառկած ե, խկ մյուսը նրա կողքին կանգնած:

ԶՈՒԽՆՈՎԱԿԻՆ ցանկացավ իջնել, վերցնել նրանց իր հետ: Բայց չի կարելի. սառույցն ամբողջովին ճաքճքված եւ Յեթե իջնի, այերոպլանը շուր կգա, բոլորը կկործանվեն — ել վոչ փոքի փրկել չի լինի:

ԶՈՒԽՆՈՎԱԿԻՆ սավառնեց նրանց գլխի վրա, թռավ և ուղիով հայտնեց „ԿՐԱՍԻՆ“-ին, վոր յերկու մարդ ե տեսել:

„ԿՐԱՍԻՆ“-ը պետք ե շտապի փրկել նրանց:

„ԿՐԱՍԻՆ“-ը ԶՈՒԽՆՈՎԱԿՈՒՑ ուղիունեռագիրն ստացավ: Սպասեցին, թե նա յերբ կվերադառնա: Բայց ահա թանձը մառախուղ բարձրացավ:

Սառցի վրա խարույկներ վառեցին, վորպեսզի ԶՈՒԽՆՈՎԱԿԻՆ ծուխը նկատելով կարողանա իմանալ, թե վորտեղ է կանգնած:

„ԿՐԱՍԻՆ“-ը:

Խարույկները չոգնեցին: Նա ստիպված յեղավ սառցահատից հեռու իջնել:

Նստելիս այերոպլանը կպավ մի սառցե բլուրի, և նրա յերկու զսպանակը տաշեղի պես ջարդ ու փշուր յեղան: ԶՈՒԽՆՈՎԱԿԻՆ ուղիոյով հայտնեց. «ԹՌ-2ԵԼ 2ԵՄ ԿԱՐՈՂ: ԱԶԱՏԵՅԵՔ ԻՄ ՏԵՍԱԾ ՄԱՐԴԿԱՆՑ, ՀԵՏՈ ԿԴԱՔ ԻՄ ՅԵՏԵՎԻՑ:»

Մի կերպ կդիմանենք:





Մոտեցան մարդկանց, Նա, ով պառկած եր, բոլորովին կապտել եր, շարժվել չեր կարողանում, միայն գլուխն եր հազիվ-հագշարժում:

Ուրախությունից լաց յեղավ, ուտելու բան խնդրեց.

— Յերկու շաբաթ ե, բերաններս բան չենք դրել:
Կրասինցիները բարձրացրին, նրանց դրին պատգարակի վրա,
տարան սառցահատ, կշտացրին և պառկեցրին քնելու: Նրանցից
մեկը այդպես ել մնաց պառկած: Նրա մի վոտքը ցուրտը տարել
եր: Նրա անունն եր ՄԱՐԻԱՆՈ:

Իսկ մյուսը, նրա ընկերը, վորի անունն եր ՑԱՊՈՒ, Կերավ,
քնեց և արթնացավ բոլոր ովին առողջ:

— Դժվար թե կարողանանք առաջ գնալ, — ասում եյին կրասինցիները կապիտանին:

— Փորձե՞ք, — ՊԵՏՔ Ե ՀԱՍՆԵԼ!

„ԿՐԱՍԻՆ“-ը նորից կովի բռնվեց սառույցների հետ: Աճբողջ որը շարժվում եր սառցադաշտերի վրայով և առաջ եր գնում:

Վերջապես կրասինցիները նկատեցին, վոր հեռվում էնչ-վոր սև բան ե շարժվում:

Նայեցին ուշադրությամբ — յերկու մարդ սառցի վրա.

մեկը պառկած ե, իսկ մյուսը կանգնած նրա մոտ:

Կրասինցիները պատգարակը վերցրին և իջան սառույցի վրա:





Հենց ՑԱՊՊԻՆ ել
պատմեց, թե ինչ եր
պատահել նրանց հետ:

«Մեր դիրիժաբլն ըն-
կավ ուժեղ փոթորկի մեջ
և ընդհարվեց սառցե մի
բարձր սարի:

Մեզ, ինն հոգու,
շպրտեց սառույցի
վրա, իսկ մնացածները
մնացին դիրիժաբլի մեջ, և
քամին նրանց քշեց — տա-
րավ։ Նրանք, հավանա-
կան ե, կորան։

Յեվ ահա մենք յերե-
քով — յես, ՄԱՐԻԱՆՈՆ
և մեր ուղեկից ՄԱԼՄ-
ԳՐԵՆԸ, — վորոշեցինք
վոտքով գնալ սառույցների
վրայով։ Գուցե հասնենք

ցամաքի և ցույց տանք այն տեղը, ուր կարելի յե վորոնել մնա-
ցածներին։ Հրաժեշտ տվինք ու գնացինք։ Միայն Մալմգրենը
չտարավ այդ սարսափելի ճամբորդությունը։ Նրա
վոտքերը ցուրտը տարավ։

— Միւնույն ե, յես կմեռնեմ, ասաց նա։ —
Թողեք ինձ այստեղ և շարունակեք ձեր
ճանապարհը։

Ստիպած յեղանք թողնել նրան։ Յես ու Մարիանոն
յերկուսով գնացինք։ Բայց շուտով Մարիանոն ել ընկավ։
Մենք մեռնում եյինք քաղցից ու սառնամանի-
քից, յերբ հայտնվեց „ԿՐԱՍԻՆ“-ը և փրկեց մեզ։




Պետք եր փրկել և նրանց, վորոնք չգնացին Յապակի, Մա-
րիանոյի և Մալմգրենի հետ, այլ մնացին ապրելու սառցի վրա։

„ԿՐԱՍԻՆ“-ը ստիպած յեղավ նորից կովել
սառույցների դեմ։

Յեվ ահա սառցահատից տեսան — սառցե անապատում մի
վրան ե խփած, իսկ նրա մոտերքը մարդիկ են վազ-
գում և թափահարում են ձեռքերով։

Լաց եյին լինում և ծիծաղում ուրախությունից, վոր „ԿՐԱ-
ՍԻՆ“-ը գտավ իրանց։

Նրանք հինգ հոգի եյին։ Համարյա հիսուն
որ ապրել եյին նրանք սառույցների մեջ,



Վրանի մոտ ընկած եր մի շուռ յեկած ու ջարդված այերոպլան։
Այդ բնօչայերոպլան է։

Թռել ե այստեղ շվեդացի ողաչու ԼՈՒՆԴԲՈՐԳԸ, ցանկացել ե փրկել բոլորին։ Մի անգամ յեկավ և տարավ նավապետ Նորիլեյին, տարավ նրան ցամաք—փրկեց։ Հետո թռավ-յեկավ յերկրորդ անգամ, բայց դիպավ սառույցին։ Այերոպլանը շուռ յեկավ և ջարդվեց։ Ողաչուն ստիպված յեղավ ապրել սառցի վրա։

Տաս որից հետո թռավ-յեկավ մի ուրիշ ոդաչու, ընկերոջն ազատեց, իսկ ջարդված այերոպլանը մնաց իր տեղում։

Կրասինցիները մի լավ զննեցին այերոպլանը, Պետք չեր ջարդված եր բոլորովին։

Փրկվածներին տեղափո-

խեցին սառցահատը։

Այնտեղ նրանց տաքա-

ցրին, կշապցրին և չոր շորեր

հագցրին։

Ա զ ա տ վ ա ծ ն ե ր ի

մեջ կար մեկը, վո-

րին ՎԵԼՅԵՐԻ երին

կոչում։


— Հիմա, — հայտարարեց ՎԻԼՅԵՐԻՆ, — ՅԵՍ ԱՅԼՅԵՎԱ

ՎՈԶ ՄԻ ԱՆԴԱՄ ԿՅԱՆՔՈՒՄԸ

ՅԵՍ ԳՆԱ ՄՇՏԱԿԱՆ ԶՄՐԱՆ

ՅԵՐԿԻՐԸ





ԻՍԿ ՄՅՈՒՍ

ՓՐԿՎԱԾԸ —

ԶԵԶԻՈՆԻ Ն —

ասաց, վոր

ՆՈՐԻՑ ԿԳՆԱ

ՀՅՈՒՄԻՍՍՅԻՆ

ԲԵՎԵՌ,


ՀԵՆՑ ՎՈՐ ԱՌՈՂՋԱՆԱ:

— ՀԱՐԿԱՎՈՐ Ե, — ասաց նա, — ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ ԱՅՍ ՅԵՐԿԻՐԸ,

ՄԱՐԴ ՎՈՉՆԶԻՑ ՉՊԵՏՔ Ե ՎԱԽԵՆԱ:

Իսկ ԶԵՀԻՈՆԻ ՎՈՎԵՔԵՐԸ ԿՈՄՐՎԱԾ Ե ՅԻ Ն.

Նրան հենակներ տվին, վոր քայլել կարողանա:




Հասավ արդեն ԶՈՒԽՆՈՎՈԿՈՒ և նրա ընկերների
մասին հոգալու ժամանակը՝ նրանք յերկար սպասեցին
առողջների վրա, մինչև „ԿՐԱՍԻՆ“-ը փրկում եր ուրիշներին:

„ԿՐԱՍԻՆ“-ը ուղղվեց այն կողմը, ուր գտնվում եր
ԶՈՒԽՆՈՎՈԿԻՆ և շուտով գտավ նրան։ Զուխնովոկու
կոտրած այերոպլանը քարշ տվին ու բարձրացրին սառցահատի վրա։

Ողաչուները պատմում եին, թե ինչպես եյին ապրել այդ-
քան ժամանակ սառցի վրա։ Ցըտից քնել չեր լինում։
Պառկում ես մի տասը ըոպե այերոպլանի մեջ և հետո դուրս ես
թռչում, վազվզում, վոր տաքանա։



ՏԱՆՉՎԵՑԻՆՔ !




Այստեղ, ուր ծովը ազատ է սառուցից, ցամ աքի ափին
փրկվածներին սպառում եր իտաւա կան «ՉԻՏՈ».

ԴԻ ՄԻԼԱՆՈ» ՀՊԳԵՆԱՎԸ

Ահա նրա նկարը, մեծ է սե:

„ԿՐԱՍԻՆ“-ը յետ դարձավ, հա սավ այդ շոգենավին և
բոլոր փրկվածները տեղ ափութեցին
„ՉԻՏՈ ԴԻ ՄԻԼԱՆՈ“-ի լուսաւում:




Ավարտեց իր գործը սառցահատը, „ԿՐԱՍԻՆ“-ը տուն ե
վերադառնում: Քանի գնում, տաքանում և ողը, Արել դարձյալ
տաքացնում ե: Դարձյալ տաք ե:

Հանկարծ „ԿՐԱՍԻՆ“-ը իմանում ե, թե ինչ մի տեղ
շոգենավը ծովի հատակն ե գնում և ուղղիոյով
ոգնության են կանչում: Իսկ շոգենավի վրա ՀԱԶԱՐ ՈՒԹ
ՀԱՐՅՈՒՐ ՄԱՐԴ կա:

Շուր յեկավ „ԿՐԱՍԻՆ“-ը և արագ թափով գնաց գեղի
այդ շոգենավը: Կրասինցիները տեսնում են՝ „ՄՈՆՏԵ ՍԵՐՎԱՆՏԵՍ“
մեծ շոգենավը թեքվել ե մի կողքի և արդեն
շուրջ գալու վրա յե: Իսկ միջի մարդիկ լաց են
լինում, հուզվում են:

Կրասինցիները սկսեցին նորոգել շոգենավը, միջի ջուրը թա-
փել, ծակերը փակել...

Արագ նորոգեցին, ԲՈԼՈՐԻՆ ՓՐԿԵՑԻՆ:



ՎԵՐԱԴԱՐՁԱԿ „ԿՐԱՍԻՆ“-Ը ՀԱՅՐԵՆԻ ԼԵՆԻՆԳՐԱԴ.

ՆՐԱՆ ԴԻՄԱՎՈՐԵՑԻՆ ԻՆՉՊԵՍ

ՄԻ ՀԵՐՈՈՒ—

ՆՎԱԳԱԾՈՒԹՅԱՄԲ.

ԱՄԲՈԼՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ ՀԱՅՏՆԻ
ԴԱՐՁԱՎ „ԿՐԱՍԻՆ“-Ը



25 ЧПТ.

Цена 25 коп.
д. х.



Э. МИНДЛИН
КРАСИН
во льдах

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԽՍՀ ԿՈՂՄԻ ԳՐԱԴԱՐԱՆ ԵՎ ՇՐՋԱՐԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



~~452~~ 22305

~~481~~

16550

32-
A 9/20



25 ԿՈՊ.

Цена 25 коп.
Д. Х.



Эм. МИНДЛИН
КРАСИН
ВО ЛЬДАХ

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10.